

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

18 հուլիսի 2013թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի առաջատար մասնագետ Սամվել Միքայելյանը:

Օրակարգում՝

1. ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և առկա խնդիրների մասին.

/Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/

2. Մարզի տարածքում իրականացված գյուղատնտեսական աշխատանքների, ստացված պարարտանյութի և դիզվառելիքի համար նախատեսված գումարների հավաքագրման ու բաշխման, բերքահավաքի ընթացքի և առկա խնդիրների մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/

3. Տեղեկատվություն 2013թվականին մարզում հրատապ ծրագրերի իրականացման ընթացքի մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.ՈՒստաբաշյան/

4. ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման և 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմման ընթացքի մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թ. Ղազարյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Մարզի տարածքում իրականացված գյուղատնտեսական աշխատանքների, ստացված պարարտանյութի և դիզվառելիքի համար նախատեսված գումարների հավաքագրման ու բաշխման, բերքահավաքի ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երրորդ՝ «Տեղեկատվություն 2013 թվականին մարզում հրատապ ծրագրերի իրականացման ընթացքի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արշակ Ուստաբաշյանը:

Օրակարգի չորրորդ՝ «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման և 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմման ընթացքի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թադևոս Ղազարյանը:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Սիսիան քաղաքային համայնքի ղեկավար Աղասի Հակոբջանյանը, Գորիս քաղաքային համայնքի ղեկավար Նելսոն Ոսկանյանը /կցվում են զեկուցումները և ելույթները/:

Հայտարարությամբ հանդես եկավ ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան

Կառ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55